Վ. Ն. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԱՆԴԵՄ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Արդի հայերենի միակազմ նախադասությունների շարահյուսական ենթահամակարգում անդեմ և անվանական նախադասությունները դիմավոր, անենթակա և մյուս տիպի նախադասությունների հետ մեկտեղ կազմում են մի առանձին խումբ։ Առաջին հայացքից թվում է, թե ժամանակակից հայ քերականները այս հարցում միասնական կարծիքի են, սահմանազատելով առանձին-առանձին անդեմ և անվանական իմաստները։ Մինչդեռ հետազոտողների մեծ մասը (Ս. Աբրահամյան [1, 134—145, 2, 487—499], Ս. Գյուլբուդաղյան [4, 122—193], Հ. Հարությունյան [5] և ուրիշներ) անդեմ և անվանական նախադասությունները համախմբում են մեկ ընդհանուր՝ անդեմ նախադասությունների շրջանակներում, որի պատճառով էլ բուն անվանական նախադասությունների քերականական գործառությունը կախման մեջ է դրվում լեզվական այլ կարգից (օրինակ, ստորոգման գաղափարից)։

Այլ սկզբունքով է առաջնորդվում պրոֆ. Վ. Առաքելյանը։ Նա զատում է միմյանցից անդեմ և անվանական տիպի նախադասությունները, քննելով անդեմ նախադասությունների կիրառությունը բայական նախադասությունների բաժնում և իրավացիորեն սահմանելով անվանական տիպի նախադասությունների համար հատուկ ենթաբաժին [3, 12—45]։ Նշենք, որ համամիտ ենք այս վերջին տեսակետին։ Միաժամանակ հարկ ենք համարում ավելի լայն շրջանակներով հարցի մեր լուսաբանումը տալ։ Այս կապակցությամբ պարզաբանենք, թե 1. ի՞նչն է ընկած անդեմ և անվանական նախադասությունների սահմանազատման հիմքում, ի՞նչն է նրանց նույնացման պատճառը, և, 2. ի՞նչ միջոցների օգնությամբ կարելի է տարբերել նախադասության այդ տիպերը։

Հարցադրման առաջին թեզը սերտորեն կապված է ստորոգման գաղափարի ըմբռնման հետ։ Հայ լեզվաբանները բազմիցս անդրադարձել են այդ հարցին և վերջնականապես հանգել այն կարծիքին, որ ստո-

րոգումը իրականացնող միակ միջոցը բայական ձևն է [1, 19]։ Ամփոփելով այս թեզը Գ. Բ. Ջահուկյանը գրում է, որ «...բայը հանդես է գալիս ոչ միայն որպես բայ, այսինքն՝ գործողության, վիճակի, եղելության նշան (փաստորեն որպես դրանց անուն), այլև որպես նախադասության ստորոգման (լայն առումով) արտահայտիչ» [6, 225]։ Սակայն ռուս քերականության ազդեցությամբ, հայ լեզվաբանների որոշակի մասը ստորոգման հարցը կապում է տրամաբանական կարգերի հետ։ Ռուս լեզվաբաններից Ե. Մ. Գալկինա-Ֆեդորուկը անդեմ և մյուս տիպի միակազմ նախադասությունների քերականական բնույթը ուղղակիորեն կախման մեջ է դնում տրամաբանական որոշ կարգերից։ Այսպես, նա գտնում է, որ «Եթե փորձենք հասկանալ, թե ի՞նչ է իրենից ներկայացնում անդեմ նախադասությունը, ապա պետք է պարզել, թե ինչպիսի հարաբերության մեջ է գտնվում լեզուն մտածողության, նախադասությունը՝ դատողության հետ» [8,5]։ Ինչպես տեսնում ենք, այստեղ հատուկ ընդգծված է տրամաբանական և լեզվաբանական հասկացությունների սերտ կապը, և այն հասցվում է խիստ մերձեցման աստիճանի։

Ստորոգման գաղափարը ներթափանցել է լեզվաբանության մեջ տրամաբանական ուսմունքից, ուր դատողությունը սովորաբար հանդես է գալիս երկբևեռ կառուցվածքով՝ սուբյեկտի և պրեդիկատի (ստորոգման) առկայությամբ։ Սակայն լեզվաբանները դեռ վաղուց նկատել են, որ լեզվում դիտվում են նաև այլ կարգի երևույթներ։ Այսպես, ենթակա-ստորոգյալ տարրական երկբևեռ կամ երկկենտրոն կառուցվածքների հետ մեկտեղ լեզվում (նաև՝ հայերենում) լայն տարածում են գտել անենթակա՝ բայաձևերով արտահայտված նախադասություններ, ավելի ճիշտ՝ բայաձև կաղապարների շուրջը կազմված նախադասություններ, և հակառակը՝ անվանական կամ այլ կարգի բառաձևերով (կաղապարներով) կազմված նախադասություններ։ Այս բոլոր միաբևեռ նախադասությունները կոչվում են միակազմ, որոնց թվում՝ անդեմ և անվանական տիպի նախադասությունները, ուր առանցքային բաղադրիչները բոլոր տիպի միակազմ նախադասություններում գլխավոր կամ գերադաս անդամ անվանում են ստացել։ Գլխավոր անդամի դասական բնորոշումը գտնում ենք Ա. Ա. Շախմատովի մոտ, որը գրում է. «Նախադասության այն անդամը, որն իր նշանակությամբ համապատասխանում է սուբյեկտի և պրեդիկատի զուգորդմանը, մենք անվանում ենք միակազմ նախադասության գլխավոր անդամ» [12, 30]։ Ակնհայտ է, որ այստեղ նույնպես հարցը առանց տրամաբանական գաղափարների ներմուծման գլուխ չի եկել, թեև հեղինակը նշում է, որ նախադասությունը դիտում է ոչ թե որպես դատողություն, այլ շարահյուսական մի այնպիսի միավոր, որն անկախ քերականական կառուցվածքից և բաղադրամասերի

կազմությունից, նաև քանակից, իր լիարժեք գործառությունն ունի լեզվում։

Տրամաբանական միտքը մեծ ազդեցություն է ունեցել լեզվաբանական մտքի վրա։ Սակայն, բոլոր դեպքերում, անհրաժեշտություն է զգացվել զերծ մնալ գաղափարների մեխանիկական ընդօրինակումներից։ Եթե նախկինում հոգեբանները, տրամաբանները և փիլիսոփաները հաստատում էին, որ, օրինակ, անդեմ նախադասությունները (Impersonalien) իրենցից ներկայացնում են անորոշ դատողություններ, որոնց կազմում բացակայում է անմիջական սուբյեկտը, և որոնք, սակայն, լիարժեք երկկազմ կառուցվածքների փոխակերպեր են, ապա հետագայում և այժմ էլ որոշակի ճշգրտումներ մտցնելով այդ ըմբռնման մեջ, լեզվաբանները ներկայացնում են այն որպես լեզվին հատուկ օրինաչափ կազմություններ։ Նույնը կարելի է ասել ինչպես անվանական տիպի նախադասությունների առաջացման և զարգացման եղանակների, այնպես էլ դրանց գոյացման ուղիների մասին։ Լեզվաբանական ուսումնասիրությունների շնորհիվ պարզվել է, որ անվանական նախադասությունները մանրաբաժանման (парцелляция) զարգացման արգասիք են [11, 322)։ Այս տեսակետից ստորոգման գաղափարի ներմուծումը անվանական նախադասություն հասկացության մեջ փոքր-ինչ խորթ է թվում և հազիվ թե օգնի նման քերականական կառուցվածքների առանձնահատկությունների բացահայտման գործին։ Նշենք նաև, որ նույնիսկ մեր օրերում ստորոգման և միակազմության հարցերը վերջնական լուծում չեն ստացել։

Այսպես, ռուսերենի ակադեմիական քերականության մեջ այն կարծիքն է հայտնվում, որ միակազմ (անդեմ, անվանական և այլն) կառուցվածքների ուսումնասիրման հարցը լուրջ և խոր քննության կարիք է զրում (9, 73)։ Այժմյան վիճակով հարցը թերևս լուծված չի կարելի համարել, քանի որ նույն աշխատության վերջերս հրապարակված նոր պրակում «ստորոգում» հասկացությունը իր տարածումն է գտել միայն որոշակի տիպի նախադասություններում [10, 542], այսինքն՝ չի ընդգրկում լեզվի շարահյուսական ողջ կառուցվածքը։

Ժամանակակից հայ լեզվաբանության մեջ տրամաբանական մոտեցումը մնում է անփոփոխ։ Այսպես՝ Հ. Հարությունյանը, որը կարծես համաձայն չէ ավանդական որոշ դրույթների հետ, ընդունելով ստորոգման գաղափարը, թեկուզև որոշակի փոփոխություններով, այնուամենայնիվ, մնում է նույն այդ դիրքերում։ Թեև այդ հասկացությանը նա մի նոր իմաստ է վերագրում, անվանելով այն հնչերանգային ստորոգում (հատուկ ընդգծելով նրա նշանակությունն ու դերը՝ նախադասության կազմավորման ընթացքում) [5,5—7], սակայն դա, մեր կարծիքով,

ամենևին էլ չի նպաստում անդեմ և, հատկապես, անվանական նախադասությունների թե՛ քերականական և թե՛ հնչերանգային կառուցվածքների առանձնահատկությունների վերհանման գործին։ Ի դեպ, նշված տիպի նախադասությունների հնչերանգային առանձնահատկությունների քննությամբ զբաղվել ենք նաև մենք։ Վերլուծության արդյունքները ցույց տվեցին, որ, նույնիսկ տարբեր հնչերանգային հաղորդակցական տիպերին պատկանելով, անդեմ և անվանական նախադասությունները խիստ տարբերվում են միմյանցից[1] և թեկուզ այս տեսակետից նրանք չեն կարող դիտվել որպես մեկ ընդհանուր ենթակարգի առանձին խմբեր, ուստի տվյալ հարցում պետք է ցուցաբերվի նոր մոտեցում։

Անդեմ և անվանական նախադասությունները միմյանցից խիստ տարբերվում են հատկապես իրենց քերականական կառուցվածքներով, մի բան, որ ցույց կտրվի ստորև։

Միակազմ (ներառյալ՝ անդեմ և անվանական) նախադասություններն իրենց առանձնահատուկ կառուցվածքի շնորհիվ կարելի է արտահայտել արտածման բանաձևերի և դրանց հատուկ նիշերի միջոցով։

Այժմ ներկայացնենք այդ նիշերի ու բանաձևերի ցանկը և տանք դրանց նախնական բացատրությունը։ Եթե ընդունենք, որ անվանական խմբին պատկանող ցանկացած անդամ կարելի է պատկերել N_m^n նիշով, ապա գոյականին, որպես անվանական խմբի առաջին անդամի, բնականաբար, կհատկացվի N^1 նիշը (թիվը աստիճանացույցի ձևով), ածականին՝ N^2, թվականին՝ N^3, դերանվանը՝ N^4 նիշերը։ Հոլովման համակարգը պատկերվում է նույն թվերի միջոցով, պատկերվելով որպես ստորին ցուցանիշ՝ ըստ հերթականության։ Օրինակ՝ N_1^1 նշանակում է գոյական անուն ուղղական հոլովով, N_2^1 գոյական անուն սեռական հոլովով և այլն։ Ինչ վերաբերում է քերականական թվի արտահայտման միջոցներին, ապա այն՝ ինչպես անվանական խմբի, այնպես էլ բայաձևերի նկատմամբ պատկերվում է sing. (եզակի թիվ) կամ pl. (հոգնակի թիվ) նիշերով։ Շարունակելով նիշերի թվարկումը, ներկայացնենք բայաձևերին և քերականական մյուս կարգերին հատուկ նիշերը։ Այսպես, եթե բայաձևին հատուկ է V (վերբալ) նիշը, ապա։ այս առումով $V_{inf.}$ կնշանակի անորոշ դերբայ, V_f —բայի դիմավոր ձևը, $V_{imps.}$(verbum impersonale) — անդեմ բայաձև, V_{part}(verbum participle) — հարակատար դերբայ, V_{aux}(auxilari verb)—օժանդակ բայ, V_{f3sing} —բայի դիմավոր ձևի 3-րդ դեմքի եզակին և այլն։ Այնուհետև՝ S_{imps}—անդեմ նախադա-

---

1 Վ. Ն. Հայրապետյան, ժամանակակից հայերենի անդեմ և անվանական նախադասությունների հնչերանգային հաղորդակցական տիպերը («Լեզվի և ոճի հարցեր», հ. 5, Երևան, 1978, էջ 72)։

սություն, S_n—*անվանական նախադասություն*, Adv.—*մակբայ*, neg—*ժխտական մասնիկ*, Interj—*ձայնարկություն*, Interr,S—*հարցական նախադասություն*, S^1—*միակազմ նախադասություն*, S^2—*երկկազմ նախադասություն*, prp.—*կապ*, Con.—*շաղկապ*։

Բանաձևերը պատկերում են յուրաքանչյուր նախադասության գծային կառուցվածքը՝ իր բաղադրամասերով։ Կառուցվածքի կամ կառուցվածքային սխեմայի առանցքային բաղադրամասը համապատասխան նիշով ներկայացնում է նախադասության գերադաս անդամը, որով էլ բնորոշվում է նախադասության տիպը (պարզ, միակազմ, թերի, անվանական և այլն)։

Միակազմ նախադասությունների շարքից այստեղ ներկայացնում ենք անդեմ և անվանական նախադասությունները որպես առանձին տիպ կամ դաս [10, 560]։ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ անդեմ նախադասությունները ժամանակակից հայ գեղարվեստական գրականության մեջ լայն տարածում են գտել, մեկնաբանությունները սկսում ենք հենց այդ խմբից։ Ժամանակակից հայերենում անդեմ նախադասության գերադաս անդամը առավելապես արտահայտվում է անորոշ դերբայով [1, 137]։ Դրա շնորհիվ տվյալ խմբին պատկանող նախադասության կառուցվածքային սխեման կառուցվում է այդ կաղապարի շուրջը, որը հանդես է գալիս որպես առանցքային, միջուկային կաղապար։ Ուրեմն բուն անդեմ նախադասություններ (S_{imps}) կարող են ճանաչվել այն կառուցվածքները, ուր որպես միջուկային կաղապար հանդես է գալիս V_{inf} նիշը, անկախ կառուցվածքում՝ մյուս բաղադրամասերի համեմատությամբ, զբաղեցրած դիրքից։ Այսպիսով, անդեմ նախադասության կառուցվածքը կարելի է դիտել հետևյալ օրինակներում։

$S_{imps.} \longleftrightarrow [(V_{inf})N_4^4 N_4^1 N] [negV_{inf})N_2^1 N_2^1 N_5^1]$	*Պահե՛լ այս ռազմակարգը չշփոթվե՛լ իր՝ Վ.արդանի շարժումներից։**
$S_{imps.} \longleftrightarrow [(V_{inf})N_{4pl}^1] [Adv(neg.V_{inf}) \cdot \cdot negN_4^1]$	*Կոտորե՛լ բոլորին,... ողջ չթողնել ոչ մեկին։*
$S_{imps.} JnterrS \longleftrightarrow (V_{inf})$	*Բաժանվե՞լ։*
$S_{imps.} \longleftrightarrow [N_1^1 AdvN_{1pl}^1 (V_{ini})] [N_1^1 (V_{inf})] \cdot \cdot [V(_{inf})N_2^1 N_1^1]$	*Առավոտը վաղ կոշիկներ սրբել, թել պատրաստել, գնալ հացի հերթ...*

* *Օրինակները վերցրել ենք արդի հայ լեզվաբանական գրականությունից։*

8—857

$S_{imps.} \rightarrow (V_{inf})con(V_{inf})[N_1^4 V_{part} V_{aux} Adv V_{inf}]$ Վեր կենալ և հեռանալ՝ այդ նշանակում է պարզապես փախչել։

$S_{imps.} InterrS \rightarrow Adv(V_{inf})N^4_{2pl}$ Որտե՞ղ գտնել դրանց։

$S_{imps.} \rightarrow (V_{inf})N^1_1 N^1_{1pl.} V_{part} N^1_{1pl.}$ Կազմակերպել լեզվի հարցերին նվիրված հաղորդումներ։

Վերոհիշյալին ավելացնենք միայն մի քանի օրինակներ, որոնք միաժամանակ ցուցաբերում են և՛ բառակապակցության, և՛ նախադասության հատկություններ։ Նման կառուցվածքները անդամների թվին չեն կարող դասվել. օրինակ՝ պահպանել մաքրություն $|(V_{inf})N^1_1|$, մատաղ լինել $|(N^1_1(V_{inf})|$ մարդու գնալ $|N^1_3(V_{inf})|$ և այլն։

Ինչպես տեսնում ենք, անդեմ նախադասությունները ժամանակակից հայերենում իրենց բաղադրամասերի կազմությամբ և կառուցվածքային արտահայտությամբ այնքան էլ բազմազան ու բազմատեսակ չեն։ Այս տեսակետից անդեմ նախադասության տիպերի ընդլայնման փորձը [3, 20—37] կարծես թե չի համապատասխանում անդեմ նախադասություն հասկացության սահմանման սկզբունքին։ Եթե ընդունված կարծիքի համաձայն անդեմ նախադասության դերադաս անդամն արտահայտվում է գերազանցապես անորոշ դերբայով [1, 137, 2, 492, 4, 123], և եթե ընդգծվում է այն միտքը, որ անդեմ նախադասությունը չունի քերականական դեմք, այսինքն՝ նրա կազմությանը չեն մասնակցում բայի դիմավոր ձևերը [2, 487], ապա այս առումով հաղիվ թե կարողանան որպես անդեմ նախադասություններ ճանաչվել հետևյալ օրինակները. Լուսանում է: Մթնեց: կամ՝ Ոչ լուսանում էր, ոչ մթնում [3, 19—20]։ Սրանք եթե ներկայացվեն համապատասխան կառուցվածքային սխեմաներով, ապա կունենան հետևյալ տեսքը. $V_{part} + V_{aux} = V_{f3sing.} \longleftrightarrow S_{imps.}$ (Լուսանում է), $V_{f3sing.} \longleftrightarrow S_{imps.}$ (Մթնեց), $[Adv\ V_{part}\ V_{aux}]\ [Neg.\ V_{part}] = [Neg.\ V_{f3sing.}]\ [Neg.\ V_{f3sing.}] \longleftrightarrow S_{imps.}$ (Ոչ լուսանում էր, ոչ մթնում) և այլն։

Չի կարելի, ըստ երևույթին, անդեմ համարել էլ բան չի ասվում, ճեռը չի խոսվում կամ ի-ով վերջավորվող հին ապառնի դերբայով [օրինակ՝ Եվ հասկանալի է, թե ինչո՞ւ (3, 24,32)] և նման մասնակի կառույցները, ուր համապատասխան՝ $[N^1_{1neg}\ V_{aux}\ V_{part}]\ [N^4_{1neg}\ V_{aux}\ V_{part}] \longleftrightarrow S_{imps}$ և $(V_{part} + V_{aux} = V_f)\ Adv \longleftrightarrow S_{imps.}$ բանաձևերի համաձայն բացահայտվում է բայի դիմավոր ձևերի առկայությունը։

Դասակարգման հարցում առաջնորդվել ենք Վ. Առաքելյանի կողմից ընդունված սկզբունքով, որի համաձայն միակազմ նախադասությունների կարգում բայական (դրանց թվում՝ անդեմ) և անվանական նախադասությունները ներկայացված են առանձին՝ միմյանցից անջատ ենթակարգերում։ Միաժամանակ համաձայն չենք այն կարծիքին, որ անդեմ նախադասությունների կազմում կարող են ընդգրկվել այնպիսի կառույցներ, որտեղ առանցքային կաղապարը (գերադաս անդամը) արտահայտված է խոնարհված բայով։ Նման նախադասությունները կարող են դասվել մեկ ուրիշ տիպի մեջ, որովհետև անդամների համար այժմ սահմանված է մեկ առանձին՝ անորոշ դերբայական դաս [10, 567], որով էլ բնորոշվում են բուն անդեմ նախադասությունները։ Այս առիթով կցանկանայինք վերլուծել ևս մեկ օրինակ։ Այսպես, Վ. Առաքելյանի գրքում [1, 32] մեջբերված է Սիրելի էր տեսնել, թե ինչպես երեկվան խաղի... նախադասությունը, որը եթե վերածենք (Սիրելի էր տեսնել) փոխակերպված կառուցվածքային սխեմայի, ապա այն կստանա՝ $S_{imps.} \rightarrow V_{part} + V_{arx} = V_1 (V_{inl})$ պատկերը, որով էլ հաստատվում է տվյալ նախադասության՝ անդեմ նախադասությունների խմբին պատկանելը։ Ճիշտ է, հեղինակն այդ նախադասությունը վերջին հաշվով դասել է անդեմ նախադասությունների շարքը, սակայն, տեղադրում է այն մեկ առանձին՝ «ի-ով վերջավորվող հին ապառնի դերբայով անդեմ նախադասությունների» շարքում, մինչդեռ ելակետային են համարվում անորոշ դերբայական ձևերը, որոնք կազմում են առանձին դաս՝ միակազմ նախադասությունների կարգում և որով էլ պայմանավորված է անդեմ նախադասության կառուցվածքը։

Մյուս կողմից, այն լեզվաբանները, որոնք անդեմ և անվանական նախադասություններում որպես առանցքային միջուկ սահմանել են բայաձևերով արտահայտված տարրերը և այդ բայաձևերի առկայությամբ համախմբում են հիշյալ տարատեսակները մեկ ընդհանուր՝ անդեմների ենթակարգում, փաստորեն անտեսում են անվանականների ինքնատիպ կառուցվածքը և դրանց գործառությունը լեզվում։ Էլ չենք խոսում այն մասին, որ մինչև այժմ չի բացահայտվել անվանական և անդեմ կառուցվածքների՝ առանձին հնչերանգային խմբերին պատկանելու օրինաչափությունները։

Անցնելով անվանական տիպի նախադասության բնույթի քննությանը, նույն սկզբունքով ներկայացնենք նրանց քերականական ինքնատիպ կառուցվածքը, ի նկատի ունենալով, սակայն, նրանց դրսևորման յուրօրինակությունը, որ դիտվում է խոսքի մեջ։

Միակազմ անվանական նախադասության կառուցվածքային նիշը S_N է։ Այս տիպի նախադասության գերադաս անդամը բացառապես արտա-

հայտված է լինում անուն խոսքի մասերով (գոյական, ածական, դերանուն), ընդ որում միշտ՝ ուղղական հոլովով և կառուցվածքում ներկայացվում է ընդհանուր՝ N^n_m նիշով։ Հաճախ անվանական նախադասությունն արտահայտված է լինում միայն մեկ բառով։ Այս դեպքում կարելի է նշել, որ $N^n_m \rightarrow S_N$:

Անվանական նախադասության առանցքային, գերիշխող բառը սովորաբար գործածվում է անորոշ առումով և այս երևույթն է պայմանավորում անդնմ տիպի նախադասությունների ըմբռնման յուրահատկությունը [5, 17]։ Հայտնի է, որ անվանական նախադասությունները անվանում են մի որևէ առարկա, երևույթ կամ իրողություն, հաստատելով այդ առարկայի կամ երևույթի առկայությունը, գոյությունը։ Թեպետև այդ տիպի նախադասությունները խոսքում ուրույն արտահայտությամբ ու ձևավորումով են հանդես դալիս, ազդարարելով մտքի ավարտվածությունը և կարող են գործածվել մեկուսացված վիճակով, սակայն որոշ դեպքերում կարող են փոխարինվել համարժեք երկկազմ նախադասություններով (ինչպես սովորաբար խոսքում փոխակերպման են ենթարկվում տարբեր տիպի նախադասությունները)։

Անվանական նախադասությունները, ղուրկ լինելով նախադասության մի այնպիսի կարևոր բաղադրիչից, ինչպիսին է բայ-ստորոգյալը, շրջապատող նախադասությունների հենարանի խիստ կարիք են զգում։ Սրանով է պայմանավորված եղանակավորող ենթատեքստի (модальный контекст) առկայությունը [11, 321]։ Անվանական նախադասությունները զուգահեռաբար ենթադրում են նախադասությունների այնպիսի խումբ, որը պատկերացվում է որպես պատմողական շղթա։ Սրանով իսկ ապահովվում է նրանց հաղորդակցական գործառությունը խոսքային գործընթացում։ Բացի այդ, լեզվաբանները հատուկ ընդգծում են նաև այն փաստը, որ անվանական նախադասությունները օժտված են հուզական բացարձակ արտահայտությամբ, ուստի և հնչերանգային առանձնահատկությունների ուսումնասիրման տեսակետից ավելի հետաքրքրական են։ Նման արտահայտչական միջոցների ուժեղանալուն նպաստում է վերոհիշյալ եղանակավորող ենթատեքստը։ Սակայն, հետազոտության նպատակների բերումով, անվանական նախադասությունները այստեղ ներկայացնում ենք ենթատեքստից դուրս, եթե կարելի է ասել «մաքուր ձևով», ունենալով առայժմ մեկ նպատակ. բացահայտել անվանական տիպի նախադասությունների կառուցվածքային առանձնահատկությունները՝ իրենց բաղադրամասերով հանդերձ։

Անվանական նախադասությունների քերականական կառուցվածքը բացահայտելու նպատակով քննենք մի քանի օրինակներ։ Այսպես,

Սպիտակ կամարներ և նկարներ՝ ոսկեզօծ շրջանակների մեջ նախադասությունը պատկերվում է հետևյալ բանաձևով.

$$S_N \rightarrow N^2(N^1_{1pl})\,con\,(N^1_{1pl})\,N^2\,N^1_{2pl.\ prp.}$$

Դիտենք ևս մեկ օրինակ՝ Հոկտեմբերյան քաղաք: Ապրիլյան ջինջ առավոտ: Նախադասությունը կամ նախադասությունները (որովհետև դրանք միմյանցից անջատ են) կարելի է պատկերել և՝ $S_N \rightarrow (N^1_1)\,N^2 | N^2\,Adv\,(N^1_1)$ (ուստի հեղինակը ներկայացրել է դրանք որպես առանձին ավարտված մտքեր) և՝ $S_N \rightarrow [(N^1_1)\,N^2]\,[N^2\,Adv\ \ (N^1_1)]$ ձևով, այսինքն՝ համախմբել այն: Ճիշտ է երկրորդ մեկնաբանությունը, որովհետև, վերջին հաշվով, ներկայացված երկու խմբերն էլ իրենց բաղադրամասերով այնուամենայնիվ համախմբված են մեկ՝ ընդհանուր հնչերանգային կորով, որով էլ պայմանավորված է նրանց միասնությունը: Սակայն մյուս կողմից, ընդունելով այն թեզը, որ ինչպես անդեմ, այնպես էլ անվանական նախադասությունները գործածվում են հատկապես գեղարվեստական խոսքի մեջ [1, 141, 7, 149], պետք է միաժամանակ հաշվի առնել նաև հեղինակների փորձը և այն միտումները, որոնցով նրանք առաջնորդվում են իրենց ստեղծագործական պրակտիկայում:

Սակայն բոլոր դեպքերում մեզ համար ամենակարևորն այն է, որ ինչպես մեջբերված, այնպես էլ մյուս օրինակներում առանցքային բաղադրիչը արտահայտված է անվանական խոսքի մասով, և որ անվանական նախադասության կազմում բացակայում է որևէ բայաձև և սրանով իսկ այս տիպի նախադասության կառուցվածքը հակադրվում է անդեմ նախադասության կառուցվածքին:

Այն հանգամանքը, որ անվանական նախադասություններն ավելի սուր հուզաարտահայտչական միջոցներով են օժտված, չի վրիպել հետազոտողների ուշադրությունից: Սրան նպաստում է նման տիպի նախադասություններում ձայնարկությունների օգտագործումը, ժխտման ձևերի միօրինակությունը կամ թեկուզև միատեսակ բառերի օգտագործումը, որը և իր արտացոլումն է գտնում այդ կառուցվածքներում՝ միօրինակություն մտցնելով նրանց մեջ: Օրինակ՝ հայերենում ցուցական իմաստով լայն տարածում են գտել այ ձայնարկությունը կամ ահա եղանակավորող բառը, որոնցով սկսվում է նախադասությունը և որոնցով էլ պայմանավորված է նման կառուցվածքների միասնական պատկերը:

Բերենք մի քանի օրինակներ եղանակավորող բառերով.

$S_n \rightarrow D^*(N_1^1)$	Ահա Բաքոսը։	$S_N \rightarrow D_{con}(N_{pl}^1)$	Ահա և նրանք։
$S_n \rightarrow DN^2(N_1^1)$	Ահա բուն հարցմունքը։	$S_N \rightarrow DN^2(N_1^1)$	Ահա սպիտակ Զյունակերտը։
$S_n \rightarrow DN^2(N_1^1)$	Ահա իսկական մարդասպանը։	$S_N \rightarrow D_{con}N_4^1N_2^4(N_1^1)$	Ահա և Օհան ապոր այգու դռնակը։
$S_n \rightarrow D(N_{pl}^1)$	Ահա աստղերը։	$S \rightarrow DN^2(N_1^1)$	Ահա նոր դրոյթը։

Ինչպես տեսնում ենք, նման կառուցվածքները կայուն են իրենց բաղադրիչների դասակարգմամբ. սրանց տարբերությունը միայն բաղադրամասերի քանակի մեջ է։ Բացի այդ, ուշագրավ է ևս մի օրինաչափություն. վերը նշված կառուցվածքներում առանցքային բառաձևը որոշյալ հոդ է ընդունում, ի տարբերություն S անվանական նախադասության մյուս տիպերի։

Նման օրինաչափություններ չեն ցուցաբերում Ա՛յ ձեռի դե՞ղ, ա՛յ լավ ձեռի դե՞ղ $S_n \rightarrow [Interj\ N_2^1(N_1^1)]\ [Interj\ N^2 N_2^1(N_1^1)]$ և մյուս՝ նման տիպի նախադասությունները, ուր դիտվում են ձայնարկության տարբեր։ Միօրինակություն են ցուցաբերում նաև այն տիպի անվանական նախադասությունները, ուր առկա են ժխտական մասնիկներ, որոնք ազդարարում են գործողության չկատարում կամ գործողության բացասում։ Այս տիպի նախադասության օրինակներից են Ոչ մի զիջում $S_N \rightarrow neg\ N^1(N_1^1)$, Ոչ մի ձայն $S_N \rightarrow neg\ N^1(N_1^1)$, Ոչ ոք, ոչ մի շունչ, ոչ զազան, ոչ թռչուն և նման կառույցները։

Ուշագրավ է, որ վերը նշված առանձին խմբերի կառուցվածքով է արտահայտվում հուզաարտահայտչական տարրը անվանական նախադասություններում։ Հուզաարտահայտչական, այնուամենայնիվ, կարևոր միջոց պետք է համարել նաև այն, որ նախադասությունները միմյանցից ավելի կտրուկ են բաժանված՝ օգտագործվում են վերջակետերը, օրինակ՝ Ինչպես միշա—գոռշ փոշոտ փողոց։ Սառը շուր։ Խաղող։ Գինի։ Մարդիկ։ Կառքեր։ Նման օրինակները հնչերանգային առանձնահատկությունների տեսակետից դիտվում են որպես մի ամբողջական կառույց, և պատահական չէ, որ լեզվաբանական գրականության մեջ ներկայացված է ամբողջությամբ։ Սա է, հավանաբար, գեղարվեստական արտահայտչամիջոցներից մեկը, որը կիրառում են գրողները, դարձնելով խոսքը սեղմ ու

---

* Անա և մյուս տիպի եղանակավորող բառաձևերի համար մեր նիշերի ցուցակում բացակայում է համապատասխան համարժեքը, ուստի այստեղ պայմանականորեն օգտագործում ենք D (դետերմինանտ) նիշը [10, 575, 624], իսկ այ ձայնարկության դեպքում՝ Interj նիշը։

դիպուկ, իսկ միտքը՝ խտացված [1, 142]։ Մյուս կողմից առկա են այնպիսի օրինակներ, որոնք այս առումով առանձին հետաքրքրություն չեն ներկայացնում և կարող են պարզապես մտցվել բարդ համադասական նախադասության կազմի մեջ, օրինակ՝ Գավառական մի քաղաք, լայն և ուղիղ փողոցներ, կանաչ խոտ մայթերի վրա, տների առաջ բոստաններ և բարձր, ստվերախիտ ծառեր... $S_N \rightarrow [N^2 N^1 (N^1_i)] [N^2 con N^2 (N^1_{ipl})] \cdot [N^2(N^1_i)N^1_{ipl} prp] [N^1_{2pl} prp (N^1_i)] [con Adv Adv (N^1_{ipl})]$ կամ՝ Լուցկի, ֆժաճազին ծխախոտներ, սեղանի վրա հաց, միջին տախտակի վրա չորս արկղ սարդինկա, ուիզար, շաքար և մի քանի ուրիշ մանր-մունր բաներ $S_N \rightarrow (N^1_i) [N^2 (N^1_{ipl})] [N^1_2 prp (N^1_i)] [(N^1_i)] [con N^1 Adv (N^1_{ipl})]$ և այլն։ Այստեղ ակնհայտ է իրերի կամ երևույթների սովորական թվարկում, որը կարող է արտասանվել միապաղաղ ձայնով, առանց հուզաարտահայտչական հանդամանքների և սրանով էլ պայմանավորված է այդ տիպի նախադասության կառուցվածքը։

Ամփոփելով անդեմ և անվանական նախադասությունների քերականական կառուցվածքի վերլուծությունը, կրկին ընդգծում ենք այն փաստարկները, որոնք հնարավորություն են տվել մեզ սահմանազատելու անվանական և անդեմ նախադասությունները որպես առանձին ենթակարգերի ներկայացուցիչներ.

1. Անդեմ և անվանական նախադասությունները իրենց քերականական կառուցվածքով հանդես են գալիս տարբեր խոսքի մասերին պատկանող առանցքային (գերադաս) անդամով, այսպես՝ $S_{imps} \rightarrow (V_{inf})$, իսկ $S_N \rightarrow (N^1_i)$։

2. Անդեմ նախադասությունների գերադաս անդամը դեմք չի արտահայտում, սակայն արտահայտված է բայաձևի կաղապարով, որը համապատասխանում է V (բայական կամ վերբալ) ձևերին։

3. Բացի առանձնահատուկ քերականական կառուցվածքներից, անվանական և անդեմ նախադասությունները խիստ տարբերվում են իրենց՝ առանձին հնչերանգային հաղորդակցական տիպերին պատկանելությամբ։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Ս. Գ., Ժամանակակից հայերենի շարահյուսական մի քանի հարցեր, Երևան, 1962։
2. Աբրահամյան Ս. Գ., Պառնասյան Ն. Ա., Օնանյան Հ. Ա., Բաղիկյան Խ. Գ., Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Երևան, 1976։
3. Առաքելյան Վ., Հայերենի շարահյուսություն, հ. Բ, Երևան, 1964։
4. Գյուլբուդաղյան Ս., Միակազմ նախադասությունները ժամանակակից հայերենում, Երևան, 1967։
5. Հարությունյան Հ., Անդեմ նախադասությունները ժամանակակից հայերենում, Երևան, 1970։

6. *Ջաճուկյան Գ. Բ. Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան 1974.*
7. *Бельский А. В.*, Опыт экспериментального исследования интонации номинатива в функции предложения («Ученые записки 1—МГПИИЯ», т. УШ), М., 1954, с. 145—167.
8. *Галкина-Федорук Е. М.*, Безличные предложения, М., 1958.
9. «Грамматика современного русского литературного языка», М., 1970.
10. «Грамматика русского языка», т. 2, ч. I, М., 1954.
11. «Морфология и синтаксис современного русского литературного языка». М., 1968.
12. *Шахматов А. А.*, Синтаксис русского языка, М., 1941.